ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մենք հաշվետու ենք
մեր համաքաղաքացիներին

2017
ԵՐԵՎԱՆԻ
ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Մենք հաշվետու ենք
մեր համաքաղաքացիներին

Հարգելի՛ համաքաղաքացիներ,

Ամեն տարի ձեզ ենք ներկայացնում մայրաքաղաքում կատարված աշխատանքների հաշվետվությունը: Ուրախ եմ արձանագրել, որ այս տարվա ծրագրերն ու աշխատանքներն իրենց հագեցվածությամբ, բովանդակությամբ ու ռիթմով նոր թափ հաղորդեցին Երևանի զարգացմանն ու գեղեցկացմանը: Այս հաշվետվության էջերը հնարավորություն են տալիս ավելի մանրամասն ծանոթանալ արված աշխատանքների ծավալներին և գնահատել դրանց արդյունքները:

Փաստ է, որ մենք անցած տարիների հրամայականների մաս կազմող առօրյա կենցաղային շատ հարցերի լուծման փուլից անցում ենք կատարել երկարաժամկետ զարգացման տեսլականների և դրանցից բխող ծավալուն ծրագրերի իրագործման փուլ: Այս և քաղաքային տնտեսության բոլոր ուղղություններով զուգահեռաբար իրականացվող ամենօրյա աշխատանքների շնորհիվ մեր քաղաքը քայլ առ քայլ դառնում է ավելի հարմար՝ սովորելու, աշխատելու, մշակութային արժեքներին հաղորդակցվելու, հետաքրքիր ու հագեցած կյանքով ապրելու համար:

2017 թվականին աստիճանաբար զարգացող ենթակառուցվածքների, արդեն ավանդույթ դարձած մշակութային փառատոնների և խոշոր միջոցառումների շնորհիվ Երևան այցելող զբոսաշրջիկների թիվը աննախադեպ աճ գրանցեց:

Մեր բոլոր ծրագրերը նպատակ ունեն զարգացնել քաղաքային տնտեսությունն ու ենթակառուցվածքները, ներդնել արդյունավետ կառավարման մեխանիզմներ և ապահովել կենսական առավել հարմարավետ պայմաններ:

Մասնավորապես, մեկնարկել է «Երևան՝ խելացի քաղաք» ծրագիրը, որը մեր քաղաքին թույլ է տալու համաքայլ ընթանալ ժամանակակից զարգացած մայրաքաղաքների հետ:

Հավատացած եմ, որ նորագույն տեխնոլոգիաների կիրառումը քաղաքային տնտեսության կառավարման մեջ այլընտրանք չունի, և մենք բոլորս ամեն օր դրանում համոզվում ենք:

Հաջորդ տարին Երևանի համար հոբելյանական է: 2018 թվականին ողջ հայությունը կնշի հնամենի և մշտապես երիտասարդ մեր մայրաքաղաքի 2800-ամյակը: Այդ նշանակալի տարեդարձը ևս մեկ առիթ է՝ աշխարհին Երևանը ներկայացնելու ոչ միայն որպես քաղաքակրթական հնագույն կենտրոն, այլև պահպանված ու նոր ստեղծվող արժեքների ներդաշնակություն, որպես զարգացման ուղիով ընթացող անկախ պետության մայրաքաղաք:

Հարգելի՛ համաքաղաքացիներ, այս տարվա բոլոր ձեռքբերումներում յուրաքանչյուր երևանցի ունի իր մասնակցությունը, հարազատ քաղաքի հանդեպ սրտացավության ու սիրո իր բաժինը, որի համար ես շնորհակալ եմ ամենքիդ: Մեր քաղաքը ժամանակակից զարգացած մայրաքաղաքների շարքում իր ուրույն տեղն ունի, իր անկրկնելի կոլորիտը և գրավչությունը: Երևանի շարունակական զարգացման ծրագրերը մեզնից պահանջում են ամենօրյա ջանք և նվիրվածություն, և մեզնից յուրաքանչյուրը այդ ծրագրերի մասնակիցն ու իրականացնողն է:

Երևանի քաղաքապետ՝
ՏԱՐՈՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Մենք հաշվետու ենք
մեր համաքաղաքացիներին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՁԱՐԳԱՑՈՂ ԵՐԵՎԱՆ 4

- Յուրաքանչյուր քաղաքի դիմագիծ կերտվում է նախ և առաջ քաղաքաշինության միջոցով: Քաղաքաշինական ծրագրերն են ստեղծում կենսագործունեության նպաստավոր պայմաններ, ձևավորում քաղաքային կենցաղավարությունը, ապահովում հարմարավետ կյանքի միջավայր:

ԲԱՐԵԿԱՐԳ ԵՐԵՎԱՆ 10

- Երևանի բոլոր բնակիչներն արժանի են քաղաքային լավագույն պայմանների, և մայրաքաղաքի համաչափ զարգացման սկզբունքն ընկած է մայրաքաղաքի բարեկարգման բոլոր ծրագրերի հիմքում: 2017թ. Երևանում շարունակվել են շինարարության և բարեկարգման լայնածավալ աշխատանքները:

ԴԻՆԱՄԻԿ ԵՐԵՎԱՆ 13

- Տեսլականում ունենալով մարդակենտրոն մայրաքաղաքի հրամայականը՝ 2017թ. շարունակվել են Երևանը ժամանակակից և մատչելի քաղաք դարձնելուն ուղղված ծրագրերը՝ ավելացնելով մայրաքաղաքում համապատասխան կահավորանքը, հարմարավետությունը և գրավչությունը:

ՀԱՐՄԱՐԱՎԵՏ ԵՐԵՎԱՆ 20

- Ժամանակակից և զարգացած քաղաքի դիմագծի կարևոր բաղադրիչը այդ քաղաքի բնակիչների արժանապատիվ կյանքի բավարար պայմաններն են, ինչը ենթադրում է նաև որակյալ կոմունալ ծառայությունների մատուցում, հարմարավետ շենքային պայմանների ապահովում և այլն:

ԷԿՈ ԵՐԵՎԱՆ 23

- Կանաչ տարածքների խնամք և պահպանում, Էներգախնայող համակարգերի և ջրային տնտեսության խնայողաբար ու արդյունավետ օգտագործման մեխանիզմների ներդրում, Էներգաարդյունավետության բարձրացում. այս քայլերն են ընկած բնապահպանության ոլորտում Երևանի քաղաքային իշխանությունների ծրագրերի հիմքում:

ՄՐՑՈՒՆԱԿ ԵՐԵՎԱՆ 28

- 2017թ. շարունակվել են Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող կրթական հաստատություններում ուսուցման համար անհրաժեշտ պայմանները բարելավելու, ինչպես նաև մայրաքաղաքի մարզական և մշակութային կյանքը բազմազան դարձնելու ուղղությամբ աշխատանքները:

Երևանի քաղաքապետարան, տարեկան հաշվետվություն 2017

ՀՈԳԱՏԱՐ ԵՐԵՎԱՆ 33

- Երևանի բնակիչները մշտապես պետք է զգան քաղաքային իշխանությունների հոգատարությունը: Այդ հոգատարության դրսևորումներից են մայրաքաղաքում անցկացվող սոցիալական և առողջապահական տարբեր ծրագրերը:

ՀՅՈՒՐԸՆԿԱԼ ԵՐԵՎԱՆ 38

- Զբոսաշրջության ոլորտում քաղաքային իշխանությունների հիմնական քայլերը միտված են ոչ միայն Երևանն արժանիորեն ներկայացնելուն, հանգստի ժամանակակից կենտրոններ ստեղծելուն և զբոսաշրջային տարբեր միջոցառումներ կազմակերպելուն, այլև տեղեկատվության թարմացմանն ու ավելացմանը, միջազգային կապեր հաստատելուն:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ 42

- Արտաքին կապերի ոլորտում իրականացվող աշխատանքներում շարունակվում է առանցքային տեղ գրավել Երևանի ճանաչելիության բարձրացումը և համագործակցության զարգացումը տարբեր պետությունների քաղաքների և շրջանների, միջազգային կառույցների և կազմակերպությունների հետ:

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆԻ 45

- 2017թ.-ին Երևանի ավագանին իր լիազորությունների շրջանակներիում ապահովել է բոլոր հիմնախնդիրների համակողմանի քննարկումը և որոշումների ընդունումը:

ԱՊԱԳԱՅԻ ԵՐԵՎԱՆ 46

- Ապագայի Երևանի տեսլականը կառուցված է մասնակցային կառավարման սկզբունքին, էլեկտրոնային կառավարման պարզեցված մեխանիզմներին, բոլոր սոցիալական ցանցերում և տարբեր հարթակներում հասանելիության, կարևոր որոշումներին քաղաքացիների մասնակցության վրա:

ԶԱՐԳԱՑՈՂ ԵՐԵՎԱՆ

Յուրաքանչյուր քաղաքի դիմագիծ կերտվում է նախ և առաջ քաղաքաշինության միջոցով: Քաղաքաշինական ծրագրերն են ստեղծում կենսագործունեության նպաստավոր պայմաններ, ձևավորում քաղաքային կենցաղավարությունը, ապահովում հարմարավետ կյանքի միջավայր:

Նպատակ դնելով Երևանը դարձնել միջազգային չափանիշներին համապատասխան ժամանակակից ու զարգացած մայրաքաղաք՝ 2017 թվականին շարունակվել են քաղաքաշինական մի շարք խոշոր նախագծեր, որոնք նախատեսում են շրջանցիկ ճանապարհների կառուցում, համալիր կառուցապատման աշխատանքներ և քաղաքաշինական այլ ծրագրեր:

ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

2017Թ. ԱՊՐԻԼԻՆ ՄԵԿՆԱՐԿԵԼ ԵՆ ԴԱՎԹԱՇԵՆ-ԱՇՏԱՐԱԿԻ ԽՃՈՒՂԻ ՆՈՐ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Ասիական զարգացման բանկի կողմից ֆինանսավորվող «Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի» շրջանակում կառուցվող անընդհատ երթևեկությամբ նոր ճանապարհը կունենա.

6 երթևեկելի գոտի՝ միջինը **28 մ** լայնությամբ

5.4 կմ երկարություն



Դավթաշեն-Աշտարակի խճուղի ճանապարհահատվածի կառուցման արդյունքում Երևանի Դավթաշեն վարչական շրջանը նոր ճանապարհով կմիանա Աջափնյակ վարչական շրջանի Երևանի արևմտյան մուտքին՝ Աշտարակի խճուղուն:

Ճանապարհը կլինի միջազգային չափորոշիչներին համապատասխան: Շինարարական աշխատանքների ընթացքում երթևեկելի գոտուց ամբողջությամբ կտեղափոխվեն առկա հաղորդուղիները, իսկ ճանապարհի արտաքին լուսավորությունը կապահովվի լուսադիոդային (LED) լուսատուներով:

Դավթաշեն-Աշտարակի խճուղու շինարարությունը կազմում է Երևանի արևմտյան շրջանցիկ ճանապարհի շինարարության մի մասը: Մայրաքաղաքի շրջանցիկ ճանապարհի շինարարությունն ամբողջությամբ նախատեսվում է ավարտել 2020 թվականին, ինչի արդյունքում Երևանը կունենա հյուսիսային և հարավային մուտքերն ու Երևանի Շենգավիթ, Մալաթիա-Սեբաստիա, Աջափնյակ և Դավթաշեն վարչական շրջաններն իրար կապող 23 կիլոմետր երկարությամբ միջազգային չափորոշիչներին համապատասխանող նոր ճանապարհ, որը զգալիորեն կբեռնաթափի մայրաքաղաքի կենտրոնական փողոցների երթևեկությունը:

ԱՐԳԱՎԱՆԴ-ՇԻՐԱԿ ՆՈՐ ՃԱՆԱՊԱՐՀԱՀԱՏՎԱԾԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ

«Քաղաքային կայուն զարգացման ներդրումային ծրագրի» շրջանակներում 2017 թ. մեկնարկեց Արգավանդ-Շիրակ նոր ճանապարհահատվածի շինարարությունը: Մինչ աշխատանքների մեկնարկը տարածքում իրականացվել են լայնածավալ պեղումներ՝ ստուգելու պատմամշակութային ժառանգություն համարվող Կարմիր բլուրի տարածքի հնագիտական շերտերը:

Շինարարական աշխատանքները ներառում են Հրազդան գետի վրայով 257մ երկարությամբ նոր մետաղական կամրջի և մոտ 2,7 կմ երկարությամբ երկկողմանի երթևեկությամբ ճանապարհի կառուցում: Կամրջի տակ տեղադրվելու է ջրի և նավթայուղերի մշտական զտիչ՝ նավթայուղերի հոսքը դեպի գետ կանխելու համար: Նոր ճանապարհին ունենալու է մոտ 24 մ լայնությամբ երթևեկելի հատված՝ 4-6 երթևեկելի գոտիներով: Կառուցվող ճանապարհահատվածը կունենա միջազգային չափորոշիչներին համապատասխան նոր արտաքին լուսավորություն՝ լուսադիոդային (LED) լուսատուներով:

2017թ. պատրաստվել են Բաբաջանյան-Աշտարակի խճուղի ճանապարհի կառուցման նախագծահաշվարկային և մրցութային փաստաթղթերը, կազմակերպվել է միջազգային մրցույթ, որի արդյունքում 2017թ. տարեվերջին կնքվել է ճանապարհի կառուցման պայմանագիր:

Բաբաջանյան-Աշտարակի խճուղի նոր ճանապարհի կառուցումը կմեկնարկի 2018թ. սկզբին

Երկարությունը մոտ **9.4** կմ

Միջին լայնությունը **24** մ

Այս հատվածում նախատեսված է կառուցել 3 ուղեանցեր, որոնք կանցնեն Օհանով և Տիչինա փողոցների վրայով, ինչպես նաև կկառուցվի մեկ ուղեանց Չաուշ-Նոր Սիլիկյան խաչմերուկում: Ճանապարհի երկայնքով կկառուցվեն 3 անցումներ՝ երկրորդային փողոցների համար և մեկ տրանսպորտային հանգույց նոր կառուցվող ճանապարհի և Նոր Սիլիկյան փողոցի հետ հատման վայրում:

Շինարարական աշխատանքների ավարտին Աջափնյակ վարչական շրջանը նոր ճանապարհով կմիանա Մալաթի-Սեբաստիա վարչական շրջանին:

Ճանապարհը կլինի միջազգային չափորոշիչներին համապատասխան: Շինարարական աշխատանքների ընթացքում երթևեկելի գոտուց ամբողջությամբ կտեղափոխվեն բոլոր հաղորդուղիները, իսկ ճանապարհի արտաքին լուսավորությունը կապահովվի լուսադիոդային (LED) լուսատուներով:

Քաղաքաշինական գործունեության կարգավորման նպատակով քաղաքաշինական ծրագրային տարածական պլանավորման փաստաթղթերի ստեղծման շրջանակներում, կատարվել են Երևանի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի գոտիավորման նախագծի մշակման աշխատանքները:

Այն տարածական զարգացման մանրամասն պայմանները սահմանող գործադրական (օպերատիվ) բնույթի փաստաթուղթ է և հիմք է քաղաքաշինական նպատակներով հողամասերի և (կամ) ճարտարապետահատակագծային առաջադրանքների տրամադրման, շենքերի ու շինությունների նախագծային փաստաթղթերի մշակման ու շինարարության թույլտվության համար: Տվյալ ծրագրային փաստաթղթով կսահմանվեն նշված տարածքների փաստացի և հեռանկարային օգտագործման ու կառուցապատման նկատմամբ պարտադիր պահանջները՝ վարչական շրջանի ամբողջ տարածքում կենսագործունեության բարենպաստ պայմաններ ապահովելու նպատակով:

Երևան քաղաքի տրանսպորտային հաղորդակցուղիների, հանգույցների թողունակության բարձրացման, երթևեկության նորմալ կազմակերպման, շրջակա միջավայրի աղտոտվածության նվազեցման, տրանսպորտային հոսքերի անարգել կազմակերպման նպատակով 2017 թվականին նախագծանախահաշվային փաստաթղթերի մշակման աշխատանքներ են ձեռնարկվել Ուլնեցի-Ռուբինյանց ավտոճանապարհի շարունակության կառուցման վերաբերյալ:

Կկառուցվի Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Գոգոլի փողոցի վերջնամասից մինչև Ռուբինյանց փողոցի նրբանցքն ընկած միացնող հատված, որը կհանդիսանա արդեն իսկ կառուցված Ուլնեցի-Ռուբինյանց ավտոճանապարհի շարունակությունը:

ՀԱՄԱՅՆՔԻ ԵՎ ՄԱՍՆԱՎՈՐ ՀԱՏՎԱԾԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐ

2017 թվականին Երևանի քաղաքապետարանը շարունակել է նպաստավոր պայմաններ ապահովել մասնավոր ներդրումների համար:

Հայկ և Էլզա Դիդիզյան մանկական վերականգնողական կենտրոն

«Սիթիզեն» մասնագիտությունների մանկական քաղաք

Կրկես

Համաքաղաքային գործառույթների համաչափ վերաբաշխման, կենտրոնի բեռնաթափման և առավել կանոնակարգված ծավալատարածական զարգացման նպատակով քաղաքի շրջանային կենտրոններում ստեղծվել են հասարակական նշանակության ժամանակակից ուսումնամարզական, մարզական, առևտրային, վարչական, բնակելի և հասարակական կառույցներ և համալիրներ:

«Ռիբոկ» սպորտային ակումբ

«ՌԻՈ» առևտրի և ժամանցի կենտրոն

«Կամար» բիզնես կենտրոն

«ԱՅԲ» դպրոց

«Ռիգմոր Քլինիք» բժշկական կենտրոն

«Երազ» բնակելի թաղամաս

ԲԱՐԵԿԱՐԳ ԵՐԵՎԱՆ

Երևանի բնակիչներն արժանի են քաղաքային լավագույն պայմանների, և Երևանի համաչափ զարգացմանն այլընտրանք չկա. հենց այս համոզմունքն է ընկած մայրաքաղաքի բարեկարգման մեր բոլոր ծրագրերի հիմքում:

2017 թ. ընթացքում մեր քաղաքում շարունակվել են շինարարական և բարեկարգման լայնածավալ աշխատանքները՝ բարեկարգվել են մայթեր, ասֆալտապատվել են փողոցներ, ստեղծվել և բարեկարգվել են բակեր, կառուցվել են խաղահրապարակներ ու ֆուտբոլի դաշտեր:

ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

2017 թ. մայրաքաղաքում շարունակվել են բակային տարածքների բարեկարգման և կահավորման աշխատանքները:

2017-ին մայրաքաղաքում կառուցվել և բարեկարգվել է

256

բակային տարածք

Նախորդ 3 տարիներին կառուցված և բարեկարգված բակային տարածքների թիվ

2014 - 2016 թթ.՝

1340

2017-ին մայրաքաղաքում տեղադրվել է

66

մանկական խաղ

Նախորդ 3 տարիներին տեղադրված մանկական խաղերի թիվ

2014 - 2016 թթ.՝

351

2017-ին մայրաքաղաքում տեղադրվել է

390

մարզասարք

Նախորդ 3 տարիներին տեղադրված մարզասարքերի թիվ

2014 - 2016 թթ.՝

898

2017-ին մայրաքաղաքի բակերում տեղադրվել է

137

զրուցարան

Նախորդ 3 տարիներին տեղադրված զրուցարանների թիվ

2014 - 2016 թթ.՝

301

2017-ին մայրաքաղաքում ստեղծվել է

6

մինի ֆուտբոլի դաշտ

Նախորդ 3 տարիներին ստեղծված մինի ֆուտբոլի դաշտերի թիվ

2014 - 2016 թթ.՝

36

ՓՈՂՈՑՆԵՐԻ ԵՎ ԲԱԿԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ԱՍՖԱԼՏԱՊԱՏՈՒՄ

Մայրաքաղաքի փողոցների և բակային տարածքների ասֆալտբետոնե ծածկի պահպանման և բարեկարգման նպատակով 2017 թվականին իրականացվել են շուրջ **750,000 քմ** ընթացիկ վերանորոգման և ասֆալտապատման աշխատանքներ, այդ թվում.

520,300 քմ

փողոցների և մայթերի ասֆալբետոնե ծածկի նորոգում

228,530 քմ

բակային տարածքների ասֆալտապատում

ՄԱՅԹԵՐԻ ՍԱԼԻԿԱՊԱՏՈՒՄ ԵՎ ԵԶՐԱՔԱՐԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ

5250 քմ

2017թ. սալիկապատված տարածքների մակերես

3390 գծմ

2017 թ. նորոգված եզրաքարերի երկարություն

ԴԻՆԱՄԻԿ ԵՐԵՎԱՆ

Քաղաքային միջավայրը պետք է հավասարապես հարմարավետ լինի բոլորի համար. փողոցները, հանրային օգտագործման վայրերը, տրանսպորտային միջոցները պետք է հասանելի լինեն նաև տեղաշարժման սահմանափակումներ ունեցող մարդկանց համար: Քաղաքային միջավայրի հարմարավետությունն իր ուղղակի ազդեցությունն ունի քաղաքի բնակիչների կյանքի որակի վրա:

Մեր տեսլականում ունենալով մարդակենտրոն մայրաքաղաքի հրամայականը՝ շարունակել ենք Երևանը ժամանակակից և մատչելի քաղաք դարձնելուն ուղղված ծրագրերը՝ ավելացնելով մայրաքաղաքում համապատասխան կահավորանքը, այդ թվում՝ թեքահարթակների, ձայնաազդանշանային լուսացույցների, մայթեզրերին տեղադրված հատուկ գոգավորությամբ սալիկների թիվը:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՈՒՄ

Քաղաքային լուսավորության ենթակառուցվածքի բարելավման նպատակով ՎԶԵԲ-ի աջակցությամբ իրականացվում է Երևանի քաղաքային լուսավորության արդիականացման ծրագիրը:

Ծրագիրը նախատեսվում է սկսել 2018 թվականին:

2017թ. իրականացվել է մրցութային գործընթացը, որն ամփոփման փուլում է:

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է Երևան քաղաքի 28 փողոցներում՝

- առկա էներգատար լուսատուները փոխարինել խնայող LED լուսատուներով,
- փոխել/ամրացնել լուսավորության հենասյուները,
- առկա վերգետնյա մալուխներն անցկացնել ստորգետնյա կապուղիներով,
- ներդնել լուսավորության ցանցի կառավարման խելացի համակարգ:

2017Թ. ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆԱՑՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ



- **86 կմ** կառուցված արտաքին լուսավորության նոր ցանց
- **193** նոր լուսավորված փողոցներ և բակեր
- **12** նոր լուսավորված այգիներ, պուրակներ, հրապարակներ, արձաններ, անցումներ, լանդշաֆտներ
- **3** նոր լուսավորված մինի ֆուտբոլի դաշտեր
- **404** փոխարինված էներգախնայող LED լուսատուներ

ՀԱՐՄԱՐԱՎԵՏ ԵՎ ՄԱՏՉԵԼԻ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՍՏԵՂԾՈՒՄ

2017 թվականին շարունակվել են մայրաքաղաքում մատչելիության և հարմարավետության ապահովմանն ուղղված ծրագրերը, որոնք հատկապես կարևոր են տեղաշարժման խնդիրներ ունեցող բնակիչների հարմարավետությունը քաղաքում ապահովելու համար:

2017-ին կանգառների ազդարարման ավտոմատ համակարգով համալրվել է

37

ավտոբուս

Վերջին 3 տարիներին կանգառների ազդարարման ավտոմատ համակարգով համալրված ավտոբուսների թիվ

2015 - 2017թթ.՝

110

2017-ին մայրաքաղաքում կառուցվել է

336

թեքահարթակ

Վերջին 4 տարիներին կառուցված թեքահարթակների թիվ

2014 - 2017թթ.՝

1957

2017-ին մայրաքաղաքում տեղադրվել են գոգավոր սալիկներ

24

հասցեներում

Վերջին 2 տարիներին տեղադրված գոգավոր սալիկների հասցեներ

2016 - 2017թթ.՝

97

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՀԱՎՈՐՈՒՄ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ

2017 թվականին Երևանում շարունակվել են քաղաքային կահավորման և ձևավորման աշխատանքները՝ դարձնելով Երևանն ավելի գրավիչ և հարմարավետ ինչպես բնակիչների, այնպես էլ հյուրերի համար:

2017-ԻՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՀԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

- Վերանորոգվել է 54 կամարանցում
- Գունազարդվել է 56 կամարանցում
- Տեղադրվել է դիտահորերի 41 թուջե նոր կափարիչներ
- Նկարազարդվել է 251 բակային տարածք

Կարապի լճի տարածքում Վիշապագորգի խճանկար

ԱՐՏԱՔԻՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԵՎ ԳՈՎԱԶԴ

2017 թ. Երևան քաղաքի պատմամշակութային հուշարձանների և ճարտարապետական արժեք ներկայացնող շենքերի վրա տեղադրվող գովազդները կանոնակարգելու մասին ընդունվել է Երևանի քաղաքապետի որոշում: Կազմված գովազդային անձնագրերում նշված է շենքերի ճակատային հատվածներում գովազդների տեղադիրների նկարագիրը, արտաքին չափերը, նյութը, ձևը:

Երևանի արտաքին գովազդի երկրորդ փառատոն

2017 թ. երկրորդ անգամ Հայաստանում անցկացվեց Երևանի արտաքին գովազդի փառատոնը: Այն իր շուրջ համախմբեց արտաքին գովազդի ոլորտում աշխարհի առաջատար մասնագետներին՝ գովազդի հայկական շուկա բերելով միջազգային լավագույն պրակտիկան և խթանելով փորձի փոխանակումը:

31

2017-ին մայրաքաղաքում տեղադրված ծառաբների չուգունե ծածկույթների թիվ

4

2017-ին մայրաքաղաքում տեղադրված փողոցների ուղենիշների թիվ

Երևանի արտաքին գովազդի երկրորդ փառատոն

2017 թ. իրականացվել է.

- **60** պատմամշակութային արժեք ունեցող շենքերի գովազդային անձնագրավորում
- **109** ապօրինի գովազդային վահանակների ապամոնտաժում
- **219** վերացվել է հետիոտներին խանգարող շարժական գովազդ
- **40** վերացվել է հետիոտներին խանգարող անշարժ գովազդ
- **6 658** տրամադրվել է գովազդի էլեկտրոնային թույլտվություն
- **238** տեղադրվել է սոցիալական արտաքին գովազդ

ԳՅՈՒՂՄԹԵՐՔԻ ՇՈՒԿԱՆԵՐ

2011 թվականից երևանցիների համար արտադրողից թարմ գյուղմթերք ձեռք բերելու հնարավորություն ստեղծելու նպատակով մայրաքաղաքում գործում են գյուղատնտեսական մթերքների սեզոնային տոնավաճառներ, որտեղ առևտուր են իրականացնում միայն արտադրողները:

ԸՆՏԱՆԻ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԶԲՈՍԱՆՔԻ ՎԱՅՐԵՐ

Երևանի 12 վարչական շրջաններում առանձնացվել են շների զբոսանքը կազմակերպելու վայրեր: Վայրերի ընտրությունն իրականացվել է կենդանիների պաշտպանության խնդիրներով զբաղվող հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ քննարկումների արդյունքում:

2017-ին մայրաքաղաքում կազմակերպվել է գյուղմթերքի վաճառքի 3 շուկա՝ Կասյան փողոցի սկզբնամասում, Սարյան փողոցին հարող տարածքում և Գայի պողոտան հատող տարածքում:

Կենդանիների զբոսանքի համար յուրաքանչյուր վարչական շրջանում առանձնացված է մեկական վայր:

2016-2017 թթ. Երևանում ապամոնտաժվել է առևտրի և սպասարկման չգործող **287** կրպակ:

2017 Թ. ԵՐԵՎԱՆՈՒՄ ԳՈՐԾԱՐԿՎԱԾ ՇԱՏՐՎԱՆՆԵՐ ԵՎ ՑԱՅՏԱՂԲՅՈՒՐՆԵՐ

20 շատրվան

2172 ցայտաղբյուր

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐ

2014 թվականի դեկտեմբերին Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի հատուկ հանձնարարությամբ սկսվել են Երևան քաղաքի հասարակական տրանսպորտի բարեփոխումներին ուղղված աշխատանքները: Բազմակողմանի բանակցային և նախապատրաստական տեխնիկական աշխատանքներից հետո 2017թ. ապրիլի 20-ին սկսվել է գործընթացի գործնական փուլը: Մեկնարկը տրվել է աշխատանքային խմբի առաջին նիստով, որի ընթացքում WYG International խորհրդատվական ընկերությունը ներկայացրել է իր պատրաստած փաթեթն ու մեկնարկային հաշվետվությունը: Դրանից հետո շարունակվել են աշխատանքային քննարկումները բարեփոխումների փաթեթի և դրա առանձին բաղադրիչների շուրջ:

Բարեփոխման՝ «Նոր ավտոբուսային երթուղային ցանցի, ինտեգրված սակագնի և տոմսային համակարգի» ծրագիրը մշակում են WYG International ընկերությունն ու «Ամերիա» ՓԲԸ-ն համատեղ՝ Ասիական զարգացման բանկի աջակցությամբ և Երևանի քաղաքապետարանի վերահսկողությամբ:

Երևան քաղաքի հասարակական բարեփոխումների գործընթացը աննախադեպ է Անկախ Հայաստանի պատմության մեջ, քանի որ նախատեսվում է վերափոխել հասարակական տրանսպորտի ամբողջ համակարգն իր բոլոր բաղադրիչներով՝ տնտեսական և կառավարման մոդելով, շահագործվող տրանսպորտային միջոցներով, օժանդակ ենթակառուցվածքներով և այլն: Բարեփոխման հիմքը նոր, ավելի օպտիմալ երթուղային ցանցն է, որի պարագայում տրանսպորտային միջոցները գործելու են փոխլրացման սկզբունքով՝ բացառելով կրկնվող երթուղիների առկայությունը: Նոր տրանսպորտային համակարգը նախատեսում է միասնական էլեկտրոնային տոմսային համակարգի, ֆինանսական շրջանառության թափանցիկության, կառավարման էլեկտրոնային համակարգի, ժամանակակից ու հարմարավետ տրանսպորտային միջոցների շահագործման ապահովում քաղաքացիների համար:

Հասարակական տրանսպորտի համակարգային բարեփոխման արդյունքում կտրուկ նվազելու է տրանսպորտային միջոցների թիվը, որն իր հերթին նպաստելու է նաև քաղաքային կյանքի համար կենսական նշանակություն ունեցող մի շարք հարակից խնդիրների լուծմանը, ինչպիսիք են օդի աղտոտվածության մակարդակի և ճանապարհների խցանումների նվազումը, հասարակական տրանսպորտի հանդեպ հանրային վերաբերմունքի փոփոխությունը, տրանսպորտային սպասարկման նոր մշակույթի ներդրումը և այլն:

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՏՐԱՆՍՊՈՐՏԻ ՕՊՏԻՄԱԼ ՑԱՆՑ

Բարեփոխման գործընթացն ունի իր պաշտոնական կայքը՝ **transport.yerevan.am**, որը նախատեսված է հանրային իրազեկման գործընթացում հանրության ներգրավվածությունն ապահովելու համար:

ՀԱՐՄԱՐԱՎԵՏ ԵՐԵՎԱՆ

Ժամանակակից և զարգացած քաղաքի դիմագծի կարևոր բաղադրիչը այդ քաղաքի բնակիչների արժանապատիվ կյանքի բավարար պայմաններն են, ինչը ենթադրում է որակյալ կոմունալ ծառայությունների մատուցում, հարմարավետ շենքային պայմանների ապահովում և այլն:

2017 թ. Երևանի քաղաքային իշխանությունները հետևողականորեն շարունակել են կոմունալ տնտեսության բարեփոխմանն ուղղված ծրագրերը, մասնավորապես՝ բնակելի ֆոնդի շենքային պայմանների բարելավումը, Երևանի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցի հիմնանորոգումն ու արդիականացումը:

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՖՈՆԴԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

2017 թվականին համատիրությունների հետ համագործակցության շրջանակներում շարունակվել են Երեւան քաղաքի բազմաբնակարան շենքերի ընթացիկ վերանորոգման աշխատանքները:

Վերանորոգվել է **1103** շենքերի շուրջ **95 000 քմ** մակերեսով հարթ տանիք:

Մասնակի նորոգվել է **1223** շենքերի շուրջ **45 000 քմ** մակերեսով թեք տանիք:

Վերանորոգվել է բազմաբնակարան **694** շենքերի **1141** շքամուտք:

Բազմաբնակարան շենքերի վթարային պատշգամբների փլուզումները կանխելու նպատակով նորոգվել եւ ամրացվել է **69** շենքի **166** վթարային պատշգամբ:

ՀԵՑ-ի կողմից փոխարինվել են **105** շենքի **253** մուտքերի մալուխային ցանցերը:

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄ ԵՎ ՋՐԱՀԵՌԱՑՈՒՄ

2017 թ. շարունակվել են մայրաքաղաքում մասնավոր տնատիրությունների և բազմաբնակարան շենքերի ջրամատակարարումն ու ջրահեռացումը հասանելի և անվտանգ դարձնելու ուղղությամբ աշխատանքները:

2017-ին կառուցվել է
90 կմ
ջրամատակարարման բաշխիչ ցանց

2017-ին կառուցվել է
29 կմ
ջրահեռացման ցանց

2017-ին կառուցվել է սեփական առանձնատների տնային միացումների
34 կմ
ջրագիծ

2017-ին կառուցվել են
6000
ջրաչափական հորեր՝ ջրաչափերով



ՇՈՒՐՋՕՐՅԱ ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՈՒՄԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ



84%
2017 թ.

70%
2014 թ.

ԱՂԲԱՎԱՅՐԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Երևանի կոշտ թափոնների կառավարման ծրագրի շրջանակներում նախատեսվում է Նուբարաշենի գործող աղբավայրի հարակից տարածքում կառուցել նոր՝ միջազգային չափորոշիչներին համապատասխան աղբավայր, ներառյալ՝ հոսքաջրերի հավաքման համակարգ, գազի հավաքման և այրման կայան, հոսանքի գեներատոր, վարչական շենք, ցանկապատ, սպասարկման համար անհրաժեշտ մեքենա-մեխանիզմներ:

Ծրագրի շրջանակներում նաև նախատեսվում է կոնսերվացնել Նուբարաշենի և Աջափնյակի աղբավայրերը: Ծրագրի մրցութային գործընթացն ու մեկնարկը նախատեսվում է 2018 թ.:

Աղբի վերամշակման գործընթացը դիտարկվում է որպես կոշտ թափոնների կառավարման գործընթացի 3-րդ բաղադրիչ, որը նախատեսվում է իրականացնել համայնք-մասնավոր համագործակցության շրջանակներում մասնավոր ներդրումների հաշվին:

ԷԿՈ ԵՐԵՎԱՆ

Ինչպես աշխարհի գրեթե բոլոր մեծ քաղաքները, Երևանը ևս այսօր բնապահպանական լուրջ մարտահրավերների առջև է կանգնած, ուստի առաջնահերթ է բնապահպանական հիմնախնդիրների արդյունավետ լուծումներ մշակելը:

Կանաչ տարածքների ավելացում և խնամք, էներգախնայող համակարգերի և ջրային տնտեսության խնայողաբար ու արդյունավետ օգտագործման մեխանիզմների ներդրում. այս քայլերն են ընկած բնապահպանության ոլորտում Երևանի քաղաքային իշխանությունների ծրագրերի հիմքում:

2017 թ. քաղաքում շարունակվել են կանաչ տարածքների ավելացման ու պահպանման, ոռոգման ցանցի ընդլայնման աշխատանքները:

2014-2017թթ. ժամանակահատվածում զգալի աշխատանքներ են իրականացվել Երևանում կանաչ տարածքները բարեկարգելու, ընդլայնելու ուղղությամբ, որի ընդհանուր մակերեսը ավելացել է **27 հա**:

Ոռոգման համակարգի ընդլայնումը և պոմպակայանների ու խորքային հորերի ստեղծումը ապահովել են ոռոգվող տարածքների շուրջ **10%** ավելացում, ներկայումս այն կազմում է **517 հա**:

Վերջին տարիներին զգալի ավելացել են ծաղկային տարածքները, դրանք համալրվել են տարբեր տեսակի, գույների ու դիմացկունությամբ աչքի ընկնող ծաղիկներով:

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2017 Թ. ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

մայրաքաղաքում ավելացված և բարելավված կանաչ տարածքների մակերես՝ 2.8 հա

մայրաքաղաքում տնկված ծառերի ու թփերի թիվ՝ 45 000

մայրաքաղաքում անցկացված և նորոգված ոռոգման ցանցի երկարություն՝ 6.6 կմ

մայրաքաղաքում ծաղկապատ տարածքների մակերես՝ 7.3 հա

մայրաքաղաքում բարելավված սիզամարգերի ծավալ՝ 12 հա

մայրաքաղաքում ստեղծված ծաղկային կոմպոզիցիաների թիվ՝ 55

մայրաքաղաքում կառուցված խորքային հորերի թիվ՝ 2

«ԿԱՆԱՉ ՔԱՂԱՔ» ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

«Կանաչ քաղաք» գործողությունների ծրագիրը վեր է հանում համայնքի բնապահպանական մարտահրավերները և լուծումներ է առաջարկում հետևյալ ուղղություններով՝

Օդի որակ. օդի որակի մշտադիտարկման ուրույն մունիցիպալ համակարգի մշակում, օդի որակի ստուգման համակարգի ստեղծում:

Տրանսպորտ. նոր տրանսպորտային համակարգի մոդելի ներդրում, էլեկտրատրանսպորտի զարգացում, նոր ձեռք բերվող ավտոբուսների թվում սեղմված բնական գազով աշխատող ավտոբուսների առնվազն 85 % -ի ապահովում:

Էներգետիկա. մանկապարտեզներում էլեկտրասարքերի արդիականացում, էներգաարդունավետ սարքավորումների կիրառման խթանում, Երևանում էներգաանարդյունավետ լուսատուների ապահովում, վարչական շենքերում արևային ջրատաքացուցիչների տեղադրում, հանրային շենքերի ջերմային վերականգնում, արևային ջրատաքացուցիչների ՖՎ համակարգերի տեղադրում առանձնատնային գոտիներում, Նուբարաշենի աղբավայրում էլեկտրականության արտադրման համար մեթան գազի օգտագործում, համայնքային շենքերում վերականգնվող էներգիայի աղբյուրների օգտագործում:

Թափոնների կառավարում. Երևանում կենսաբանորեն քայքայվող թափոնների կոմպոստավորման փորձարկման նախագծի մշակում, Նուբարաշենի և Աջափնյակի աղբավայրերի կոնսերվացում:

Ջուր. ջրային ենթակառուցվածքների կենտրոնական հաշվառման GIS համակարգի ստեղծում, ջրամատակարարման համակարգի ամենամեծ հոսքակորուստներ ունեցող հատվածների նորոգում, կոյուղու և անձրևաջրերի ջրատարների միացման հատվածների վերանորոգում:

Հողօգտագործում. Կանաչ տարածքների և անտառների վերականգնում և ընդլայնում, Երևանի համար GIS-ի վրա հիմնված բնապահպանական քարտեզի պատրաստում, աղտոտված տարածքների վերականգնում և այլն:

ԵՐԵՎԱՆԻ ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ

2017թ. դեկտեմբերին Երևանի քաղաքապետարանը Եվրոպական ներդրումային բանկի հետ կնքեց էներգաարդյունավետության ֆինանսական պայմանագիր, որի շրջանակներում նախատեսվում է քաղաքապետարանի ենթակայության մանկապարտեզներում իրականացնել էներգաարդյունավետության բարձրացման աշխատանքներ: Ծրագրի արդյունքում կկրճատվեն հանրային շենքերի էներգետիկ սպասարկման ֆինանսական ծախսերը, ինչպես նաև կնվազի արտանետվող CO_2 գազը:

Ծրագրի շրջանակներում մանկապարտեզների շուրջ 30%-ը կհիմնավերանորոգվի, կիրականացվեն էներգախնայողությանն ուղղված միջոցառումներ, ինչպես նաև շենքերի սեյսմիկ ամրացում: Երևանի քաղաքապետարանը, կարևորելով այս ծրագիրը, մասնակցելու է գործընթացին՝ ապահովելով մանկապարտեզների ամբողջական հիմնանորոգումը:

ԷՆԵՐԳԵՏԻԿ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Կանաչ կլիմայի հիմնադրամի կողմից տրամադրվող դրամաշնորհի միջոցով՝ Երևանի ենթակայության 2 հանրային շենքերում՝ հ.160 մանկապարտեզում և հ.3 մանկապատանեկան կենտրոնում հիմնանորոգման ծրագրերի շրջանակներում համատեղ ֆինանսավորմամբ իրականացվում է էներգետիկ արդյունավետության բարձրացմանն ուղղված պիլոտային ծրագիր:

Ավարտվել են մանկապարտեզի շինարարական աշխատանքները՝ ՄԱԶԾ-ի կողմից էներգետիկ արդյունավետության միջոցառումների ֆինանսավորմամբ:

Իրականացված ջերմաարդիականացման աշխատանքները, որոնք ներառել են տանիքի ջերմամեկուսացում, էներգաարդյունավետ պատուհանների տեղադրում, լուսադիոդային լուսավորության ապահովում, պատերի մասնակի ջերմամեկուսացում, կբարելավեն էներգաարդյունավետությունը 50%-ով:

Մանկապատանեկան կենտրոնի շինարարական աշխատանքները կավարտվեն 2018թ.: Իրականացված աշխատանքների արդյունքում էներգաարդյունավետությունը կբարելավվի ավելի քան 60%-ով:

ՄՐՑՈՒՆԱԿ ԵՐԵՎԱՆ

Առաջնորդվելով այն համոզմունքով, որ հենց կրթությունը կարող է լինել արժանապատիվ ապագայի երաշխիքը՝ ջանքեր են ներդրվել Երևանի քաղաքապետարանի ենթակայությամբ գործող կրթական հաստատություններում՝ նախադպրոցական, դպրոցական և արտադպրոցական, պայմանները բարելավելու ուղղությամբ՝ սկսած այդ հաստատությունները հիմնանորոգելուց և ջեռուցմամբ ապահովելուց, մինչև անհրաժեշտ գույքի համալրում:

Պակաս կարևորություն չի տրվել նաև մայրաքաղաքի մարզական ու մշակութային կյանքը ավելի բազմազան ու հետաքրքիր դարձնելուն՝ արդիականացնելով ու նորոգելով մշակութային և ֆիզիկական դաստիարակության մանկապատանեկան կենտրոնները, օժանդակելով նոր կենտրոնների ստեղծմանը, նպաստավոր պայմաններ ստեղծելով տարբեր ծրագրերի իրականացման համար, նաև՝ մարզական և մշակութային միջոցառումների անցկացմանն աջակցելով:

ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Երևանի քաղաքապետարանի՝ կրթական ոլորտում իրականացվող ծրագրերի հիմնական նպատակը յուրաքանչյուր երեխայի կրթության համար բարենպաստ պայմանների ապահովումն է: Ապահովվել է նախադպրոցական տարիքի երեխաների ներդաշնակ զարգացումը մանկապարտեզներում:

160
մանկապարտեզում ապահովվել է

30 300 երեխայի անվճար կրթությունը, այդ թվում
189 երեխայի ներառական կրթությունը

ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶՆԵՐԻ ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

8
2017 թ. հիմնանորոգված մանկապարտեզ

12 340
2017 թ. տրամադրված նոր գույք

ԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

155	մայրաքաղաքում գործող դպրոցների թիվ
96 559	2017-ին Երևանի դպրոցներում սովորող աշակերտների թիվ
2 177	2017-ին Երևանի դպրոցներում ներառական կրթություն ստացող աշակերտներ թիվ
4 866	2017-ին անվճար դասագրքեր ստացած սոցիալապես անապահով աշակերտների թիվ
10 000	2017-ին դպրոցամուտից առաջ դպրոցական պայուսակներ և գրենական պիտույքներ ստացած երեխաների թիվ

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ՕԼԻՄՊԻԱԴԱՆԵՐՈՒՄ ԳՐԱՆՑՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

մարզային փուլ

ԵՐԵԽԱՆԵՐԻ ԱՐՏԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

44 2017թ. մայրաքաղաքում արտադպրոցական ուսուցում կազմակերպող մշակութային հաստատությունների թիվ

41 2017թ. մայրաքաղաքում երեխաների արտադպրոցական ուսուցում կազմակերպող մարզական հաստատությունների թիվ

12 2017թ. Երևանում գործող շախմատի դպրոցների թիվ

17 190 2017թ. մշակութային հաստատություններում արտադպրոցական ուսուցում ստացող երեխաների թիվ

7 984 2017թ. մայրաքաղաքի սպորտային հաստատություններում մարզվող երեխաների թիվ

2 731 2017թ. շախմատի դպրոցներում սովորող երեխաների թիվ

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ԵՐԵՎԱՆՈՒՄ

19 2017 թ. դրությամբ մայրաքաղաքի գրադարանների թիվ

18 315 2017թ. գրադարանային ֆոնդում ավելացված գրքերի թիվ

77 839 2017 թ. գրադարանների ընթերցողների քանակ

3 2017թ. դրությամբ քաղաքապետարանի ենթակայությամբ գործող թատրոնների թիվ

351	2017թ. բեմադրված ներկայացումների քանակ
78 192	2017թ. մայրաքաղաքի ենթակայությամբ գործող թատրոնների հանդիսատեսների թիվ
5	2017թ դրությամբ քաղաքապետարանի ենթակայությամբ գործող թանգարաններ
27	2017թ. թանգարանների կողմից կազմակերպված ցուցահանդեսներ
33 971	2017թ. թանգարանների այցելուների թիվ
117 663	2017 թ թանգարանների ցուցանմուշների թիվ
125	2017թ. մայրաքաղաքում կազմակերպված մշակութային և մարզական միջոցառումների թիվ
176	2017թ. մշակութային հաստատություններին տրամադրված երաժշտական գործիքների թիվ

ՀՈԳԱՏԱՐ ԵՐԵՎԱՆ

Քաղաքի բնակիչները մշտապես պետք է զգան քաղաքային իշխանությունների հոգատարությունը: Այդ հոգատարության դրսևորումներից են սոցիալական և առողջապահական զանազան ծրագրերը:

Վերջին տարիներին Երևանի քաղաքապետարանի ջանքերն ուղղված են եղել քաղաքի յուրաքանչյուր բնակչի համար որակյալ և մատչելի բժշկական օգնություն ստանալու պայմաններ ապահովելուն՝ առողջապահական հաստատությունների շենքերի վերանորոգման ծրագրեր իրականացնելու, դրանք բժշկական սարքավորումներով վերազինելու, բժշկական անձնակազմը վերապատրաստելու միջոցով: Միևնույն ժամանակ սոցիալապես անապահով անձանց համար կազմակերպվել է առողջապահական անվճար բժշկական հետազոտություն: Իրականացվել են հոգածության կարիք ունեցողներին ուղղված սոցիալական աջակցության տարբեր ծրագրեր:

ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Առողջապահության ոլորտի գերակայությունը առողջապահական համակարգի կառավարման արդյունավետության և բնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացումն է, մատչելիության ապահովումը, սպասարկող բժշկական ընկերությունների շենքային պայմանների բարելավումը, գույքի արդիականացումը, վերազինումը:

Վերոնշյալ գերակայությունների ապահովման նպատակով 2017 թվականին իրականացվել են հետևյալ աշխատանքները.

65 բժիշկ և **55** բուժքույր

2017թ. անցել են մասնագիտական վերապատրաստումներ

26 բժշկական սարքավորում և

54 բժշկական գույք է ձեռք բերվել «Առողջապահական կազմակերպությունների համար բժշկական սարքավորումների ձեռքբերում» ծրագրի շրջանակներում

ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 2017 Թ. ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ

2017թ. մայրաքաղաքի պոլիկլինիկաներում գրանցված հաճախումների թիվ՝ 2 578 273

2017թ. մայրաքաղաքում առողջարանային վերականգնողական ուղեգրեր ստացած քաղաքացիների թիվ՝ 250

2017թ. Երևանի քաղաքապետարանի կողմից բուժման ուղեգրեր ստացած քաղաքացիների թիվ՝ 1 668

2017թ. Երևանի ենթակայության պոլիկլինիկաների կողմից բուժման ուղեգրեր ստացած քաղաքացիների թիվ՝ 29 333

2017թ. մայրաքաղաքում համակարգչային անվճար հետազոտությունների (ՀՏ) ուղեգրեր ստացած քաղաքացիների թիվ՝ 240

2017թ. մայրաքաղաքում շտապ օգնության ծառայության կանչերի թիվ՝ 226 919

2017թ. մայրաքաղաքում ծնված երեխաների թիվ՝ 20 933

2017թ. մայրաքաղաքի 7 պոլիկլինիկաներում իրականացվել են պատուհանների փոխարինման աշխատանքներ

2018 թվականից սկսած մանկապարտեզների 4500 աշխատակից և շախմատի դպրոցների 170 աշխատակից կօգտվեն առողջապահական ապահովագրության փաթեթներից

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԵՐ

Սոցիալական ապահովության ոլորտում Երևանի քաղաքապետարանի աշխատանքների հիմնական նպատակը կյանքի դժվարին իրավիճակներում հայտնված անձանց, կարիքավոր և բազմազավակ ընտանիքներին և նրանց երեխաներին, վետերաններին, զոհված և հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքներին, տարեցներին, կարիքավոր սիրիահայերին և սոցիալական խնդիրներ ունեցող այլ խմբերին ուշադրության կենտրոնում պահելն ու նրանց սոցիալական պաշտպանությունն ապահովելն է:

ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՄԱՐ

1 215 2017թ. ճամբարներում հանգստացած երեխաների թիվ

4 234 2017թ. գրենական պիտույքներ և դպրոցական պարագաներ ստացած երեխաների թիվ

13 415 2017թ. Ամանորի և Սուրբ Ծննդյան տոների առիթով միջոցառումներին մասնակցած երեխաների թիվ

40 422 2017թ. Ամանորյա մանկական նվեր-փաթեթներ ստացած երեխաների թիվ

ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ

7 740 2017թ. պարենային աջակցություն ստացած ընտանիքների թիվ

21 538 2017թ. Ամանորյա սննդի փաթեթներ ստացած ընտանիքների թիվ

1 153 2017թ. աջակցություն ստացած սիրիահայ ընտանիքների թիվ

ՀԱՏՈՒԿ ՀՈԳԱԾՈՒԹՅԱՆ ԽՄԲԵՐ

2 400 2017թ. բարեգործական ճաշարաններից օգտվող քաղաքացիների թիվ

146 2017թ. ժամանակավոր կացարաններում տեղավորված անօթևանների թիվ

1 132 2017թ. մշտական ուշադրության ներքո գտնված տարեցների թիվ

Ծնողների այցելություն երևանաբնակ զինծառայողներին

ՀԱՏՈՒԿ ԾՐԱԳՐԵՐ

3 200 2017թ. սահմանամերձ գոտիներում և Արցախում երևանաբնակ զինծառայող զավակներին այցելած ծնողների թիվ

4 2017թ. բնակարաններ ստացած զոհված և հաշմանդամ ազատամարտիկների ընտանիքների թիվ

2 799 2017թ. Էրեբունի-Երևան տոնակատարությունների սոցիալական բաղադրիչի շրջանակներում աջակցություն ստացած ընտանիքների թիվ

260 2017թ. «Երազի տուն» կենտրոնում աջակցություն ստացած շահառուների թիվ

«Երազի տուն» վերականգնողական և զարգացման կենտրոն

Երևանում բացվել է մանկական ուղեղային կաթված ունեցող երեխաների և նրանց մայրերի համար նախատեսված «Երազի տուն» վերականգնողական և զարգացման կենտրոն:

ՀՅՈՒՐԸՆԿԱԼ ԵՐԵՎԱՆ

Հյուրընկալ քաղաքի համբավ վայելող Երևանը, լինելով Հայաստանի գլխավոր զբոսաշրջային կենտրոնը, դեռևս բավարար չափով ճանաչելի և բացահայտված չէ աշխարհի տարբեր վայրերում յուրօրինակ կոլորիտ և անկրկնելի զգացողություններ փնտրող զբոսաշրջության սիրահարների համար: Ուստի քաղաքային իշխանությունների հիմնական քայլերն այս ուղղությամբ միտված են ոչ միայն Երևանն արժանիորեն ներկայացնելուն, հանգստի ժամանակակից կենտրոններ ստեղծելուն և քաղաքային-զբոսաշրջային տարբեր միջոցառումներ ու փառատոններ կազմակերպելուն, այլև մայրաքաղաքի զբոսաշրջային քարտեզներում ուշադրության կենտրոնից դուրս մնացած մշակութային հաստատությունները ներառելուն, տեղեկատվության թարմացմանն ու ավելացմանը, միջազգային կապեր հաստատելուն: Միաժամանակ շարունակվել են զբոսաշրջային ենթակառուցվածքների արդիականացմանն ուղղված ծրագրերը:

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅՈՒՆԸ ԹՎԵՐՈՎ

2017թ. հունվար-սեպտեմբեր ամիսներին Հայաստանի Հանրապետություն է ժամանել **1 172 402** զբոսաշրջիկ, որոնք առնվազն մեկ օր անցկացրել են Երևանում: Նախորդ տարվա համեմատ այս ցուցանիշն աճել է **21%**-ով:

2017թ. Երևանում գործում է **200** հյուրանոցային տնտեսության օբյեկտ, **4594** հյուրանոցային համար, **8014** ննջատեղ: Նախորդ տարվա համեմատ այս ցուցանիշն աճել է **13.5 %**-ով:

2017թ. մայրաքաղաքում բացվել է միջազգային հեղինակավոր **«Accor Hotels»** ցանցին պատկանող **«IBIS Yerevan Center» («ԻԲԻՍ Երևան կենտրոն»)** հյուրանոցը:

ԻՐԱԴԱՐՁԱՅԻՆ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

Երևանի ճանաչելիության բարձրացման և մայրաքաղաքում իրադարձային զբոսաշրջությունը զարգացնելու նպատակով Երևանի քաղաքապետարանը 2017թ. ևս կազմակերպել է արդեն ավանդական դարձած փառատոններ, ինչպես նաև աջակցել է Երևանում անցկացվող տարբեր միջոցառումների կազմակերպիչներին:

«Երևան ՏԱՐԱԶֆեստ»

«Երևանի գարեջրի փառատոն»

«Համով-հոտով Երևան» փառատոն

«Էրեբունի-Երևան 2799» տոնակատարություն

Yerevan.am կայքում գործում է **«Միջոցառումների օրացույց»** խորագիրը, որտեղ ներկայացվում է Երևանում անցկացվող մարզական, մշակութային և զբոսաշրջային նշանակության միջոցառումների մասին տեղեկատվություն:

ԶԲՈՍԱՇՐՋԻԿՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

- Իրականացվել է «Ես եմ իմ քաղաքի զբոսավարը» կրթական-կամավորական ծրագիրը մայրաքաղաքի ապագա զբոսավարների պատրաստման նպատակով:
- Տպագրել և հյուրանոցներին, զբոսաշրջային ընկերություններին, թանգարաններին են տրամադրվել երկլեզու (ռուսերեն և անգլերեն) զբոսաշրջային քարտեզներ:
- Հեռախոսով և առցանց տեղեկատվական աջակցություն է տրամադրվել Երևան այցելող զբոսաշրջիկներին և համաքաղաքացիներին (2017թ. սպասարկվել է շուրջ 7000 մարդ):

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՎ ՄԻՋՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ

- «Սանկտ Պետերբուրգի օրերը Երևանում» և «Երևանի օրերը Սանկտ Պետերբուգում» ծրագրերի շրջանակներում անցկացվել են կլոր սեղան-քննարկումներ, հանդիպումներ հայաստանյան և ռուսական զբոսաշրջային ինդուստրիայի ներկայացուցիչների միջև:
- Երևանի զբոսաշրջային ներուժը ներկայացվել է «Մրցունակություն՝ տուրիզմի կայուն զարգացման համար» խորագրով միջազգային համաժողովին:
- Երևանի քաղաքապետարանի և Մարսելի տուրիզմի ու կոնգրեսի գրասենյակի միջև ստորագրվել է համագործակցության հուշագիր:
- «Երևանի օրերը Մոսկվայում» ծրագրի շրջանակում անցկացվել է Երևանի և Մոսկվայի զբոսաշրջային ներուժը ներկայացնող կոնֆերանս:

«ԵՐԵՎԱՆ ՍԻԹԻ ՏՈՒՐ» ԶԲՈՍԱՇՐՋԱՅԻՆ ԱՌԱՋԱՐԿ

«Երևան Սիթի Տուր» զբոսաշրջային առաջարկի շրջանակում 2017թ. մշակվել և իրականացվել է նաև «Գիշերային Երևան» երթուղին, որը ինչպես մեր համաքաղաքացիներին, այնպես էլ մայրաքաղաքի հյուրերին հնարավորություն է ընձեռել Երևանի տեսարժան վայրերում շրջել նաև երեկոյան ժամերին: «Երևան Սիթի Տուր» ծրագրով այս տարի ևս անցկացվել են սոցիալական բազմաթիվ ծրագրեր՝ դպրոցականների, ուսանողների, տարեցների, հաշմանդամների համար:

«Երևան Սիթի Տուր» քաղաքային զբոսաշրջային պաշտոնական երթուղին՝ «Տարվա լավագույն զբոսաշրջային նախագիծ»

2017 ԹՎԱԿԱՆԻՆ «ԵՐԵՎԱՆ ՍԻԹԻ ՏՈՒՐ» ԾՐԱԳՐԻՑ ՕԳՏՎԵԼ Է

2017 Թ. ԵՐԵՎԱՆԻ ԿԵՆԴԱՆԱԲԱՆԱԿԱՆ ԱՅԳՈՒ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԹԻՎ

Ժամանակակից տեխնոլոգիաները զբոսաշրջության ոլորտում

Երևանի քաղաքապետարանի ենթակայության հինգ համայնքային թանգարանների և Կենդանաբանական զբոսայգու համար միջազգային izi.TRAVEL հարթակում ներդրվել է եռալեզու աուդիոգիդ ծրագիրը:

Սպասարկման ոլորտի բարելավում

«Երևան Քարտ» ընկերության հետ կնքված հուշագրի շրջանակներում Հայաստան այցելած զբոսաշրջիկները հնարավորություն են ստանում միասնական տոմսով օգտվել զբոսաշրջային մի շարք ենթակառուցվածքներից, անվճար մուտք գործել քաղաքի և հարակից վայրերի 40-ից ավելի թանգարաններ, ժամանցի վայրեր, մասնակցել էքսկուրսիաների և ստանալ զեղչեր ավելի քան 150 գործընկեր կազմակերպություններում:

ԱՐՏԱՔԻՆ ԿԱՊԵՐ

Երևան քաղաքի արտաքին կապերի ոլորտում իրականացվող աշխատանքներում շարունակում է առանցքային տեղ գրավել մայրաքաղաքի ճանաչելիության բարձրացումը և համագործակցության զարգացումը տարբեր պետությունների քաղաքների և շրջանների հետ: 2017 թ. Երևանն ակտիվ համագործակցել է նաև միջազգային կառույցների և կազմակերպությունների հետ:

2017 թվականին Երևանն ակտիվորեն շարունակել է տարբեր քաղաքների և շրջանների, միջազգային կառույցների և կազմակերպությունների հետ կապերի ստեղծման և զարգացման ուղղությամբ աշխատանքները:

Երևանի քաղաքապետարանը համագործակցում է արտերկրի ավելի քան 50 քաղաքների և շրջանների և 8 միջազգային կազմակերպությունների հետ

Երևանի հետ համագործակցության շրջանակներում 2017 թ. մայրաքաղաք է այցելել գործընկեր քաղաքների շուրջ 30 պատվիրակություն

«Էրեբունի-Երևան – 2799» տոնակատարության շրջանակներում Երևանը հյուրընկալել է 13 երկրի 23 քաղաքների պատվիրակությունների:

ԵՐԵՎԱՆ ԵՎ ՄԱՐՍԵԼ ՔԱՂԱՔՆԵՐԸ ՆՇԵԼ ԵՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ 25-ԱՄՅԱԿԸ

Մարսելի քաղաքապետի հրավերով Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի գլխավորած պաշտոնական պատվիրակությունը եղել է Մարսելում: Այցի ընթացքում Երևանի քաղաքապետարանի պատվիրակությունը մասնակցել է Հայ-ֆրանսիական տնտեսական 10-րդ ֆորումին, ներկայացվել են Երևան քաղաքի ներդրումային առաջարկներն ու Երևանի զբոսաշրջային ոլորտի ներուժն ու զարգացումը, տեղի են ունեցել պաշտոնական հանդիպումներ, քննարկումներ:

Վերաստորագրվել է Երևանի «Սուրբ Աստվածամայր» ԲԿ-ի և Մարսելի հանրային աջակցության կլինիկայի միջև համագործակցության համաձայնագիրը, ստորագրվել են համագործակցության հուշագրեր զբոսաշրջության և կրթության ոլորտներում:

2017 թ. Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանը հանդիպումներ է ունեցել Փարիզի, Լիոնի իր գործընկերների, ինչպես նաև Իլ դը Ֆրանսի շրջանային խորհրդի նախագահի հետ:
Տ. Մարգարյանը հանդիպել է նաև ֆրանսիական Արտելիա, Ալստոմ, ՄԴՊ ընկերությունների ներկայացուցիչներին, որոնց հետ քննարկվել են Երևանում առաջնահերթ հետաքրքրություն ներկայացնող ներդրումային ուղղությունների վերաբերյալ հարցեր:

Ստորագրվել է ՀՀ Երևան և ՉԺՀ Ցինդաո քաղաքների միջև բարեկամական համագործակցային հարաբերությունների վերաբերյալ «Մտադրությունների հուշագիր»:

Երևանում անցկացվել են Սանկտ Պետերբուրգի օրեր, որի շրջանակներում կազմակերպվել են մշակութային միջոցառումներ, թեմատիկ քննարկումներ, կլոր սեղաններ:



Երևան - Ցինդաո համագործակցություն

Երևանի քաղաքապետի հանդիպումը Բուշ բյու Ռոն դեպարտամենտի նախագահի հետ

Երևանի քաղաքապետի հանդիպումը Փարիզի քաղաքապետի հետ

2017 թ. սեպտեմբերին Երևանի քաղաքապետ Տարոն Մարգարյանի գլխավորած պատվիրակությունը պաշտոնական այցով եղել է Սանկտ Պետերբուրգում, որտեղ անցկացվել են Երևանի օրեր: Միջոցառման շրջանակներում տեղի են ունեցել պաշտոնական հանդիպումներ, կազմակերպվել են կլոր սեղաններ, Երևանի պատմական և մշակութային ժառանգությունը ներկայացնող բազմաթիվ մշակութային միջոցառումներ:

«Երևանի օրերը Սանկտ Պետերբուրգում»

«Երևանի օրերը Մոսկվայում»

Երևանի համագործակցությունը ԼՂՀ քաղաքների և շրջանների և ՀՀ մարզերի և համայնքների հետ

Երևանը շարունակել է տարբեր ոլորտներում համագործակցությունը և փորձի փոխանակման ծրագրերը ԼՂՀ քաղաքների և շրջանների և ՀՀ մարզերի և համայնքների հետ

Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ Ստեփանակերտում շարունակվում են «Ազատամարտիկների այգու» կառուցման աշխատանքները:

Ստեփանակերտում կառուցվող «Ազատամարտիկների այգի»

ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆԻ

Երևանի 2-րդ գումարման ավագանու լիազորությունները դադարեցվել են 2017 թվականի հունիսին և իր լիազորություններն է ստանձնել 3-րդ գումարման նորընտիր ավագանին:

2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆԻՆ

- գումարել է **8** նիստ՝ **5** հերթական և **3** արտահերթ,
- ընդունել է **102** որոշում,
- Երեւանի պատվավոր քաղաքացու կոչում է շնորհել **4** հոգու:

Երևանի ավագանու գործունեության թափանցիկությունն ապահովելու նպատակով 2015 թ. Երևանի ավագանու նիստերը ուղիղ հեռարձակվում են առցանց:

2017 ԹՎԱԿԱՆԻՆ ԴԱՐՁԱՆ ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏՎԱՎՈՐ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

ԱՐՏԱՎԱԶԴ ՓԵԼԵՇՅԱՆ

ՆԱՐԱ ՇԼԵՊՉՅԱՆ

ՌԱՋՄԻԿ ԴԱՎՈՅԱՆ

ՌԱԼՖ ՅԻՐԻԿՅԱՆ

ԱՊԱԳԱՅԻ ԵՐԵՎԱՆ

Ապագայի քաղաքում ամեն ինչ պետք է ծառայի քաղաքացու հարմարավետությանը, ժամանակի խնայողությանը, արագ տեղաշարժին և տեղեկությունների արդյունավետ փոխանակմանը: Ապագայի քաղաքը ենթադրում է էներգախնայող, ջերմախնայող համակարգերի, էկոլոգիապես մաքուր տրանսպորտային միջոցների ինտեգրում քաղաքային կյանքին: Երևանն ունի բոլոր նախադրյալները՝ դառնալու ապագայի քաղաք, և ապագա Երևանի տեսլականն այսօր կառուցված է մասնակցային կառավարման սկզբունքի վրա: Այդ ուղղությամբ առաջին քայլերն արդեն արված են՝ էլեկտրոնային կառավարման պարզեցված մեխանիզմներ, հասանելիություն բոլոր տեսակի սոցիալական ցանցերում, կարևոր որոշումներին քաղաքացիների մասնակցություն հանրային խորհրդատվությունների միջոցով և այլն:

Երևանը «խելացի քաղաք» դարձնելու ուղղությամբ քայլերը կլինեն շարունակական:

Նորագույն տեխնոլոգիաների ներդրումը քաղաքային կառավարման համակարգում

Երևանի քաղաքապետարանի տարբեր ստորաբաժանումներում ներդրվել են ներքին թվայնացված 43 համակարգեր և 2 կառավարման և վերահսկողության ծրագրեր:

Թվայնացվել է Երևանի քաղաքապետարանի կողմից բնակչին մատուցվող ծառայությունների մեծ մասը: Yerevan.am պաշտոնական կայքի միջոցով հնարավոր է գտնել դիմումների ձևաչափեր, ուղարկել առցանց դիմում և հետևել դրանց ընթացքին: Կատարել հարցումներ տրանսպորտային միջոցների գույքահարկի պարտքի, վճարովի ավտոկայանատեղերի իրավախախտումների, անարժ գույքի պարտքի վերաբերյալ:

Երևանի քաղաքապետի հանձնարարությամբ ձևավորվել է «Երևան՝ խելացի քաղաք» ծրագրի մշակման և իրականացման հանձնաժողով՝ քաղաքային տնտեսության տարբեր ոլորտներում կառավարման արդյունավետության բարձրացման, քաղաքապետարան-քաղաքացի կապի ապահովման, քաղաքային ենթակառուցվածքների զարգացման և էլեկտրոնային ծառայությունների որակի բարելավման նպատակով:

Երևանի քաղաքապետարանը, ՎիվաՍել-ՄՏՍ-ն ու Տեղեկատվական և հաղորդակցության տեխնոլոգիաների գործատուների միությունը կնքել են համագործակցության եռակողմ հուշագիր՝ աջակցելու «Երևան՝ խելացի քաղաք» ռազմավարական ծրագրի իրագործմանը:

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ

«Կլիմաթոն Երևան» բնապահպանական խնդիրների լուծմանն ուղղված հաքաթոն

«Խելացի քաղաք» հաքաթոն

152 703

Երևանի քաղաքապետարանում և վարչական շրջաններում ստացված դիմում-գրությունների թիվ

52 659

Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների թեժ գծերով ստացված զանգերի թիվ

2 516

Երևանի քաղաքապետարանի պաշտոնական կայքի միջոցով ստացված առցանց դիմում-գրությունների թիվ

39 516

Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների աշխատակազմերի «Մեկ պատուհան» գրասենյակի խորհրդատուների կողմից խորհրդատվություն ստացած քաղաքացիների թիվ

1 611

Երևանի քաղաքապետարանում խորհրդատվական ընդունելություններին մասնակցած քաղաքացիների թիվ

7 700

Երևանի վարչական շրջաններում խորհրդատվական ընդունելություններին մասնակիցների թիվ

390

Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների էլեկտրոնային հասցեների միջոցով ստացված դիմումների թիվ

2 686 970

Երևանի քաղաքապետարանի կայքէջի դիտում

2 358

Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանների սոցիալական ցանցերի միջոցով ստացված դիմումների թիվ

140 157

2017 թ. լուծված խնդիրների թիվ

1-15 օր

Խնդիրներին լուծման միջին ժամանակը

60

www.yerevan.am կայքէջի էլ. ծառայություններ

Հարգելի համաքաղաքացիներ,
ձեզ հուզող բոլոր հարցերով կարող եք դիմել Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջաններում գործող «Թեժ գիծ» ծառայությանը կամ նամակ գրել էլեկտրոնային հասցեներով

Երևանի քաղաքապետարանի թեժ գիծ՝
+(374 11) 514 000
էլ. փոստ՝ pressyerevan@yerevan.am

Աջափնյակ վարչական շրջան
+(374 11) 518-008
ajapnyak@yerevan.am

Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջան
+(374 11) 518-588
malatia_sebastia@yerevan.am

Ավան վարչական շրջան
+(374 11) 518-111
avan@yerevan.am

Նոր Նորք վարչական շրջան
+(374 11) 518-688
nor_norq@yerevan.am

Արաբկիր վարչական շրջան
+(374 11) 518-188
arabkir@yerevan.am

Նորք-Մարաշ վարչական շրջան
+(374 11) 518-718
norq_marash@yerevan.am

Դավթաշեն վարչական շրջան
+(374 11) 518-288
davtashen@yerevan.am

Նուբարաշեն վարչական շրջան
+(374 11) 518-738
nubarashen@yerevan.am

Էրեբունի վարչական շրջան
+(374 11) 518-388
erebouni@yerevan.am

Շենգավիթ վարչական շրջան
+(374 11) 518-808
shengavit@yerevan.am

Կենտրոն վարչական շրջան
+(374 11) 518-488
kentron@yerevan.am

Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջան
+(374 11) 518-889
qanaqer_zeytun@yerevan.am

2017
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ
ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ, Երևան, 0015, Արգիշտի փող. 1
Հեռ.՝ (+374 11) 514121
Էլ. փոստ՝ press@yerevan.am

evnmunicipality
yerevanmunicipality
www.yerevan.am

© ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ 2017